№ 88 Մայիսի 28 (Յունիսի 9) 1880 Մայիսի 28 (Յունիսի 9) № 88

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱԿ

Տարեկան գինը 10 բուլուկէս տարվանը 6 բուլ.
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք գրվում են ուղղակի
Տեսնտ. Редакція „Мацъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿԱՒԹԻՒՆ

Օրվայ կենսական հարց.—Ներքին տեսութիւն. Շերամապահութիւն. Նամակ Թեւանից. Նամակ Ն.-Ազուլիսից. Նամակ Մայկոպից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. Ֆրանսիա.—«Մշակի» հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—Բանասիրական խնդիր.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Կառավարիչք Քաղաքային, Ռազմական և Աշխատական վարչութեանց յայտնում են, որ մայիսի 28-ին, առաւօտեան 10 ժամին Հանգուցեալ Կայսրուհու թաղման օրը, անկախ անցեալ հոգեհանդիստներից, պիտի կատարվի Հայոց Վանքի Մայր եկեղեցում լիտուրգիայ, թաղման հանդէս: Սորա համար խնդրում են շնորհ բերել նշանակեալ օրը բոլոր թիֆլիսի բնակչաց:

ՕՐՎԱՅ ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ

II

Երկար խօսելը մեզ շատ հեռու կը տանի, ես կառաջարկեմ միայն այն, որ ամենանհրաժեշտն է, որը առաջանում է Հայաստանի հայերի ներկայ թշուառ դրութիւնից:

Յաղովվեն բանի մաց անձինք, կազմեն մի մեծ ընկերութիւն, ողորմած Կայսեր հովանաւորութեան ներքոյ, օգնելու թշուառ հայերին, ուր և լինէին նոքա:

Այդ ընկերութիւնը լինի սիրտ, որից բղխելով կենսաբեր երակները կը թափանցեն ամենուրեք, ուր կայ հայի «ա՛խ»: Այդ ընկերութիւնը լինի հեղինակ և պատկառելի լինի ամեն մի հայի համար: Այդ ընկերութեան այսօրուայ գործն է ուզարկել անձինք տեղեկանալու Վանայ և շրջակայից ներկայ դրութեան և այն միջոցների մասին, որոնք յարմարաւոր կը թուին անմիջապէս առաջարկելու:

Երևի թէ նոյն իսկ առաջին քայլը ընկերութեան կը լինի սվելոց հայ բաժանել, հիմնել Հայաստանում ամբարանոցներ — մի տարվայ պաշար, և բանալ հիւանդանոցներ, որոնց գոնեայ մէկը կարելի լինի առ միշտ թողնել: Եւ առհասարակ աչք ունենալ տաճկաց Հայաստանի վրա բուսական ժամանակ, քանի որ ազգի ճակատագիր է, քանի որ Տաճկաստանի գործերը խառնիճաղանճ դրութեան մէջ են, քանի որ կառավարութեան տուած դրամնոյն հարուածը կը կորցնի իր հետևերը, քանի որ օրինաց փոխարէն զէնք է քաշած հայերի գլխին, քանի որ ո՛չ տաճիկ կառավարութիւնը, այլ թափառական քրդերն են տիրապետում հայերին և այդ բոլորը գոնեայ յանուն մարդկութեան, յանուն մարդասիրութեան:

Շտապենք. դանդաղ գործելը եթէ ներելի է, միայն այն ժամանակ, երբ պատմութիւնը իր բնական դանդաղ քայլերովն է ընթանում, բայց այսօր, այսօր ճրագնաժամ է, ամեն մի բուկն, ամեն մի փայրեակոր անդառնալի կորուստ պէտք է բերի ազգին. խեղճ է հայոց ազգը, ձեռքից գնում է, ժամ է օգնելու: Շտապենք, շտապենք:

Բ. Դաւասարդեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՎՐԱ

—

Երբ շերամները սկսում են գուրս գալ սերմերից, այդ գուրս եկածները հաւաքելով ուրիշ ամանի վրա են գնում: Սրա համար սերմը բանում են առաւօտները արևագալի թոյլ ճնապագլիներն տակ, գնում են վրէն թըթենու մի քանի փոքրիկ տերևներ և երբ գուրս եկած շերամները նորանց վրա են հաւաքվում, զգուշութեամբ տերևները վեր են առնում և գնում փոքր ինչ յարդ ածած մի ամանի վրա: Սովորաբար սերմերից շերամները գուրս են գալիս միայն առաւօտեան դէմ, ուստի առաւօտեան, մօտ մի ժամ ընթացքում, հաւաքում են որքան պատրաստի գուրս եկած շերամ է լինում և այնուհետև թողնում են սերմը մինչև հետևեալ առաւօտ, վրէն մի քանի հատ տերև և մի երկու բարակ ու փոքրիկ ծղնօտ թողնելով որոշ վրա կարողանային բարձրանալ կոտի վրա մնացած կամ հէնց նոր գուրս եկող շերամները:

Հաւաքած շերամները իրանց ամանովը պահում են նոյն այն բնակարաններում, ուր պիտի կատարվի շերամի մուցանելը: Մեր գիւղացիները այս բանի համար սովորաբար բանեցնում են քեօշկը (չորացած մրգենէն և ընդեղէն պահելու բնակարանը), մառանը (ուտեստի պահարանը), կամ թոնրատունը և երբէմն իրանց կեցած բնակարանը: Վերջին դիպուածում իրանք գետնվում են բակի մի անկիւնում կամ տան գահիթում:

Սերմը խատկվելուց յետոյ գիւղացուին բոլոր ուշադրութիւնը դարձնում է շերամներին խնամելու և մուցանելու վրա: Նորածնունդ շերամներին ուտելու տերև են տալիս, հէնց որ տեսնում են առաջը արդէն թառամել է: Այս ժամանակ տալիս են միայն քիչքոյշ, նոր բացված տերևներ: Տերևը թարմ ճնալու համար նրան թացացրած քսակների մէջ են ածում, այդում պոկելուց, և այնպէս տուն բերում:

Շերամների ամելուն համեմատ հեռացնում ամանների թիւը շատացնում են: Մէկից միւս ամանի մէջ տեղափոխելու համար այս վերջին ամանի մէջ նոյնպէս փոքր ինչ յարդ են ածում ու առաջին ամանից թթենու տերևը շերամների հետ վեր առնելով, նոր ամանում դնում են, և սրտի վէրքերին սրբում է բուսական թմրութիւն.

Ցաւը, ուր տանում էր նրան Մէլիք-Մանասարը, գտնվում էր վաղարշապատի հին փաղցոնների մէկի մէջ. Շինվածքները, թէև մանր էին և խիստ աղքատ, բայց որպէս աւէտարարի վաղարշապատի տները, ունէին ընդարձակ բակեր, որ հովանաւորված էին պտղատու ծառերով.

—Դու չատ գոհ չես լինի, ասաց ճանապարհին Մէլիք-Մանասարը,—եթէ դիտենաս, թէ որտեղ եմ տանում քեզ:

—Լեռ համար մի, և նոյն է, պատասխանեց վարդանը անփոյթ կերպով.—Ես միայն ցանկանում էի մի քանի տեղեկութիւններ ստանալ պ. Սալմանի մասին. Այնտեղ մեզ խօսելիս չի լինիս:

—Ոչ դր.

Փոքրիկ դրան մուտքը զարկեցին, մի պառաւ կին բաց արաց դուռը. Դրանք ներս մտան և դուռը կրկին փակվեցաւ նրանց ետևիցը:

—Այ նանի, քեզ համար մի նոր հիւր եմ բերել, ասաց Մէլիք-Մանասարը:

Պառաւը մի խորամանկ հայացք ձգելով վարդանի երեսին, պատասխանեց.

—Աչքիս վրան...

—Դէ չուտ, նանի, մեզ համար մի չի՞ գինի, սաստիկ ծարաւ ենք, ասաց Մէլիք-Մանասարը. Եւ մտանելով, աւելացրաց.—Հոգիդ կը հանեմ, եթէ մի ուրիշ մարդ ներս ես թողել:

Պառաւը խորդուբոր կերպով գլուխը շարժեց և հեռացաւ.

Երկու երիտասարդները մտան մի փոքրիկ, բայց բաւական մաքուր սենեակ, որ կահաւորված էր կիսասասկան և կիսաեւրոպական ճաշակով, և նստան փոքրիկ սեղանի մօտ, միմեանց հանդէպ. Քանի րոպէից յետոյ մի մանկահասակ կին յուշիկ քայլերով ներս մտաւ և լռութեամբ գրեց սեղանի վրա մի չիր գինի, երկու բաժակի հետ, և նոյնպէս լռութեամբ հեռացաւ. Նրա գլխի հայկական պանուճանքը բոլորովին քողարկել էր դէմքը, երևում էին միայն զոյգ սեղրակ աչքերը աղեղնաձև յօնքերի հետ: Բայց ինչ որ երևում էր, այդ էլ բաւական էր փոքր ի չատէ հասկացողութիւն կազմելու նրա գեղեցկութեան մասին.

Մէլիք-Մանասարը բաժակները լցնելով, մէկը խմեցրեց, միւսը վարդանին տալով, ասաց.

—Ես շատ ուրախ եմ, որ մեր վանքերը չինված են քաջ մեծի մասին մարդկային բնակութիւնից հեռու, լեռների, ձորերի և անապատների մէջ. Ոչ մի տեղ չը կան այնքան սրիկայ և անբարոյական պատանիներ, որքան վաղարշապատում. Ոչ մի տեղ չը կան այնքան թեթև վարքի տէր կիներ, որքան այստեղ: Ահա այդ գեղեցիկ կինը, որ այնպէս հանգստ և ամբիծած կերպով ներս մտաւ և խմիչք հեռացաւ, մի արեղայի սիրուհի է. Վանքը, ես մտածում էի, գոնէ պահպանում է կրօնական ջերմեռանդութիւնը, բայց այստեղ մարդիկ ոչինչի չեն հաւատում. Արեղաների վարքը պատճառում է ժողովրդի մէջ գայթակղութիւն և թերահաւատութիւն. Այստեղ արդէն սկսվել է բորբոքվել բողոքականութիւնը. Անցնելով փաղցոնների, ի հարկէ, դու տեսար բաւական գեղեցիկ տներ, եթէ քննելու լինիս, թէ ովքեր են նրանց տէրերը, կը տեսնես, որ համարեա բոլորը արեղաների տեառ կամ մեր մեծաւոր ազգականներ են, որոնք առաջ աղքատ են եղել և յետոյ վանքի շնորհիւ հարստացել են: Ես, իրաւն ասեմ, տանել չեմ կարողանում, երբ նկատում եմ, որ այստեղ հարիւր հազարներ են վատնվում, երբ այդմ մեր ամեն մի կոկիկը մեծ արժէք ունի մեզ համար: Հազարումէկ պէտքեր ունենք, ամենի համար փող է պահանջվում. Կ. Պոլսում ազգային տեղուկը դատարկ է. Պարմիրզը գոչ չունի իր ամենանհրաժեշտ ծախքերը լրացնելու համար: Բայց նրա վրա այժմ ծանրացած են այնպիսի գործեր, որոնց յայտագրումը, որոնց յետադարձութիւնը յատուկ ազգային կորուստ պիտի համարվի ազգի համար: Այսուամենայնիւ, ես չեմ նեղասում Կ. Պոլսի պատրիարքարանի և հայոց Մայր Աթոռի մէջ համերաշխութեան մի նոր անգամ Մանկունին Կ. Պոլսում քսան և հինգ հազար կորցրեց կանոքիանների մէջ, և որպէս լսում եմ, եռեսուն հազար ոսկի մօտ օրերում ուղարկված է, սատանան գիտէ, ինչ գժոխային նպատակների համար, բայց հայոց պատրիարքը, մեր միակ գործունեայ մարդը, գոչ չունի...

—Այդ գինին փոքր ինչ թթված է երևում, ընդմիջեց վարդանը.

—Դու չէիր լսում ինձ, գոչեց Մէլիք-Մանասարը վշտացած ձայնով.

—Լսեցի, պատրիարքը գոչ չունի...

—Այսպէս չէ կարելի խօսել...

—Ի՞նչ խօսել, ես միայն մի բան գիտեմ,—ինչ ազգ, որ յոյսը դրել է միայն եկեղեցականների վրա, նրա կործանման սկիզբը մօտ է վաղանցիկ:

Մանկահասակ կինը կրկին ներս մտաւ, յուշիկ քայլերով մօտեցաւ սեղանին և դրեց նրա վրա մատուցարանի մէջ դարձած նախաճաշիկը. Այս անգամ երեսի քողի ծայրը, որից առաջ երևում